

ԿԼՏՐԻՃ՝ ԿԵՆՕՔ ԹՈՂԻ ԶԱՅՍ ԿԵԱՆՍ
ԾԱՆԿԵԱԼ ԵՂԷՆԵՐ ՀՈՂՈՑ ՏԵՆ
ՈՐՔ ՀԱՆԳԻՊԻՔԻ ԵՅԻՐ ԴԱՄԲԱՆ
ՏՈՒՔ ԶՈՂՈՐՄԻՍ ԼԻՆԲԵՐԱՆ

ՌՄԼ ԿԵՍՄԻՐԻ ՄԵԿՆ

3.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ
ՈՐՈՒՇՈՒՑԻ ԽՐԱՊԱՆՇԵԱՆ
ՄՀՏՄԻ ՄԿԲՏԻՉԻ ԿՈՂԱԿԻՑ ԲԱՐՕՆ
ԽԱՐՈՒՆԻՍ ՈՐ ՀԱՆԳԵԱՆ

ՌՄԼ ԿԵՍՄԻՐ ՕԳՈՍՏՈՒՍ ԻԷՒՆ

4.

ԸՍՏ ՀՐԱՄԱՆԻ ՏՆ ԱՐԱՐԻ
ԻՋ Է ՀՆՁԱՆ ՍՈՒՆ ՏԱՊԱՆԻ
ՈՐ ԷՐ ՊԱՐԿԵՇՏ ԵՒ ԳՈՂԱԼԻ
ՊԱՐՕՆ ՕԼԱՆԵՒՍ ԶԵԱՎՀՈՒԻ
ՊԷԵԲԷԼԵՆՍ ՄՀԻ ՄԿԲՏԻՉԻ ՈՐԻ
ՈՐՔ ՀԱՆԳԻՊԻՔԻ ԵՅԻՐ ՏԱՊԱՆԻ
ՄԻ ՁԱՆՁՐԱՆԱՔ ՏԱԼ ԶՈՂՈՐՄԻ
ԹՎԻՆ ՌՄԼ ԶԱՆԿԵՄԵՐԻ ԺՋԻ

5.

ՀՈՂԱՆԻԹԵԱՆ ՅԱՅՍ ԴԱՄԲԱՆԱՆ
ՄԱՐՄՈՑ ՄԻԱՅՆ ՍԱ ԿԱՅԱՐԱՆ
ԸՍՏ ԶՈՒՈՐ ԲԱՆԻՆ ՏՈՐԱՎԱՆ
ԵՄՈՒՑ ՅԱՐԿԱՆ ՍՈՒՆ ԳԻԲԵԶՄԱՆ
ԱՅՍ. ՀԱՃԸ ՊԱՐԿԻՐ ՈՐԻ
ԱՆՈՒՄԲ ՀԱՃԸ ԱԼԹԵՆ ԿՈՒԻ
ՈՐ ԷՐ ՊԱՐԿԵՇՏ ԵՒ ԳՈՂԱԼԻ
ԲԱՐԻ ՄԱՀՈՒՄԲ ԱՆՈՒ ՏԵՐ ՓՈՒԻ
ԴՈՒՔ ՀԱՆԳԻՊԻՔԻ ՍՈՒՆ ՏԱՊԱՆԻ
ԼԻՆԲԵՐԱՆ ՏՈՒՔ ԶՈՂՈՐՄԻ
ԹՎԻՆ ՀԱՅՈՑ (ՌՄԼ) ՄԱՅԻՍ Ժ.

6.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵ
ԱՆ ՊԷԵԲԷԼԵՆՍ ՄՀԻ
ԱՍՏՈՒՐԻ ՈՐԻ ԿԱՐԱ
ՊԵՏԻՆ ՈՐ ՓՈՒՆՑԱՆ (ՌՄԻՐ)
ՅՈՒՆԻՍԻ ԺԱ.

7.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵ
ԱՆ ՊԷԵԲԷԼԵՆՍ ԳԻՐԳ
ՕՐԻ ԴՈՒՄՏՈՒՐ ԴԱՅՁԷԿԻ
ԻԼԻՆ. ՈՐ ՓՈՒՆՑԱՆ ՌՄԻՐ
(ԸՐԲԱՆԻՅԻ).

ՄԱՅՆԱԽՈՍԱԿԱՆ

Պրոֆ. Ն. Յ. ՄԱՐԻ ՆՈՐ ՈՍՈՒՄԱՍԵՐՈՒԹԻՆՆԵՐԸ:

Ա. 1. Камень съ архиепископа надписью изъ АНН въ Азіатскомъ Музеѣ № 2. Надпись Епифанія, Католикоса Гречіи (изъ раскопокъ въ АНН 1910 г.) (Արտասպար-թիաններ Ս. Պետրոսապոլի Գիտութեան շինարարի Տեղեկատուից 1910թ.)

Պետրոսապոլի համալսարանի Արեւելեան ճիւղի պրոֆեսոր, իսկ վերջերս նաեւ գիտութեան շինարարի անդամ Ն. Մարի ծանօթ է հայութեան լայն շրջաններին գլխաւորապէս Անիում կառարար իր պեղումներով: Ա՛յ Քանի տարի է անընդհատ իւրաքանչիւր ամառ գալիս է նա Ախուրեանի ափերը՝ Բագրատունեաց մայրաքաղաքի բեկորների տակից հայութեան հին կեանքը յոյս աշխարհ հանելու համար: Զարմանալի տոկոսութեամբ նա առաջ է տանում այդ աշխատութիւնները եւ իր ոգեւորութեամբ կարողանում է յափշտակել նաեւ իր աշակերտներին շատերին, որոնք նրա օրինակով իրախուսուած՝ բաժանում են նրա հետ պեղումների բոլոր դժուարութիւնները: Յոյս կարելի է ունենալ, որ այդ նոր ուժերի աշակերտեամբ Պրոֆ. Մարի պիտի կարողանայ իրականացնել այն ընդարձակ ծրագիրը, որ մշակուած է եղել այդ հնագիտական հետախուզութիւնները սկսելուց առաջ:

Արարտեան դաշը Ռուսական տիրպետութեան տակ անցնելով, Հայաստանի հին մայրաքաղաքները՝ Երասաւը, Գուինը, Վաղարշապատը, Երուանդաւաթը, Բագարանը, Անի պիտի բնականօրէն արեւորեին ռուսական գիտնականների հետաքրքրութիւնը, եւ ռուսական արեւելագիտութեան մանկութեամբ միայն պէտք է բացատրել այն հանգամանքը, որ պեղումները այդ վայրերում այսպէս ուշ են սկսուել: Այդտեղ թաղուած են ոչ միայն վերջին ժամանակաշրջանների մահատական թուրք եւ արաբական աշխարհակալութեանց հետքերը, այլ դարաւոր փոյնների տակ ծածկուած ձուռն է նաեւ աւելի հին՝ պարսկական, բիւզանդական, հռոմէական, պարթեւական, նոյն իսկ իսլամական քաղաքակրթութեանց ազդեցութեան փաստերը: Պեղումները այդ կողմերում պիտի լրացնեն եւ յաճախ բազումից այլ գոյնով լուսաւորեն Հայոց պատմութեան այնպիսի շրջաններ, որոնց մասին կամ գրաւոր տեղեկութիւններ չառ ի՛նչ ունինք, կամ մինչեւ այսօր իսկապէս ոչինչ չը գիտանք: Պրոֆ. Մարի սկսած գործը գիտական